ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՈՒՐՑԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Ուրցաձոր համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Ուրցաձոր,(0234)86590 (0234) 86-486, urtsadzor90@gmail.com,
urtsadzor.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02 նոյեմբեր 2017 թվականի N 34

ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետով պահանջով ավագանին որոշեց.
Հաստատել նիստի օրակարգը հետևյալ հաջորդականությամբ՝

1. ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ / ՋԵԿ. Գ.ՄԱՐԳԱՐՅԱՆ/
2. ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ 3-ՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ/ ՋԵԿ. Ռ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ/
3. ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ /ՋԵԿ.Ա.ՄԵԼՔՈՆՅԱՆ/
4. ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՎՃԱՐ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ, ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՎՃԱՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԱՅԴ ՎՃԱՐԻ ԳԱՆՁՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ / ՋԵԿ. Գ.ՄԱՐԳԱՐՅԱՆ /
5. ՈՒՐՑԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՀՈՂԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՍԽԵՄԱՅՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂ,ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 1.0 ՀԱ /ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ՝0395-0001/ ԱՐՈՏԱՎԱՅՐԸ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԵՐԻ ԿԱՏԵԳՈՐԻԱ՝ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈԽԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ / ՋԵԿ. Ռ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ/
6. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 10 ՔՄ.ՏԱՐԱԾՔՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ/ ՋԵԿ. Ռ.ԱՆԴՐԵԱՍՅԱՆ/
7. ՈՒՐՑԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 30 ՀԱ ՎԱՐԵԼԱՀՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ /ՋԵԿ. Ռ.ԱՆԴՐԵԱՍՅԱՆ /

8. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՆԱԽԱՁԵՌՆՈՂ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ/ Գ. ՄԱՐԳԱՐՅԱՆ/

ԿՈՂՄ -6 ԴԵՄ-0 ՁԵՌՆՊԱՀ-0

1.ՌՈՒԶԱՆՆԱ ՍԱՐԳՍՅԱՆ
2.ՄԱՐՈ ԱՌԱՔԵԼՅԱՆ
3. ՄՀԵՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
4.ԱՐՍԵՆ ՄԻՐԶՈՅԱՆ
5.ԱՐՏՅՈՄ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ
6.ՆՈՐԻԿ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌԱՖԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՈՒՐՑԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Ուրցաձոր համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Ուրցաձոր,(0234)86590 (0234) 86-486, urtsadzor90@gmail.com,
urtsadzor.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02 Նոյեմբեր 2017 թվականի N 35 - Ն

ՈՒՐՑԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԵՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջով, համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել 2017 թվականի երրորդ եռամսյակի բյուջեի կատարման վերաբերյալ հաղորդումը /համաձայն հավելվածի/

ԿՈՂՄ -6	ԴԵՄ-0	ՁԵՌՆՊԱՀ-0

1.ՌՈՒԶԱՆՆԱ ՍԱՐԳՍՅԱՆ
2.ՄԱՐՈ ԱՌԱՔԵԼՅԱՆ
3. ՄՀԵՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
4.ԱՐՍԵՆ ՄԻՐԶՈՅԱՆ
5.ԱՐՏՅՈՄ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ
6.ՆՈՐԻԿ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌԱՖԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՈՒՐՑԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2017Թ. Հավելված1

ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ հազ. դրամ 29.09.2017

Հ/Հ	Եկամտատեսակները	Պլանը	Փաստացի	կատ,%
	Ընդամենը եկամուտներ, այդ թվում	120367.884	89263.63	74.2
	1.Հարկեր և տուրքեր, այդ թվում	15504.00	10018.91	64.62
1/1	Գույքային հարկեր անշարժ գույքից, այդ թվում	6550.00	4153.58	63.41
	Գույքահարկ շենքի և շինությունների, որից	150.00	109.79	73.19
	Ֆիզիկական անձանցից			
	Իրավաբանական անձանցիծ			
	Հողի հարկ, այդ թվում	6400.00	4043.79	63.18
	Ֆիզիկական անձանիցից	6250.00	3743.49	59.90
	Իրավաբանական անձանցիծ	150.00	300.30	200.20
1/2	**Գույքահարկ փոխադրամիջոցներից**	8150.00	5072.03	62.23
1/3	**Ապրանքների օգտագործման և իրացման թույլտվության համար, այդ թվում**	804.00	793.30	98.67
	Տեղական տուրքեր, որից			
	Շինությունների շինարարության թույլատվության համար, որից	414.00	424.40	102.51
	Ծխախոտիև Խմիչքներիվաճառքի թույլտվություն	300.00	298.60	99.53
	վառելիքի վաճառքի համար	60.00	60.00	100.00
	Արխիվից փաստաթղթեր տրամադրման համար	30.00	10.30	34.33
	2.Պաշտոնական դրամաշնորհներ, այդ թվում	84680.70	63510.50	75.00
2/5	Ընթացիկ ներքին դրամաշնորհներ/դոտացիա/	84680.70	63510.50	75.00
	3.Այլ եկամուտներ	16110.00	12661.04	78.59
3/3	Գույքի վարձակալությունից մուտքեր, որից	7710.00	6428.58	83.38
	Հողերի վարձակալություն	7710.00	6428.58	83.38
3/4	Համայնքի բյուջի եկամուտներ ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից, այդ թվում			
	Պատվիրակված լիազորություններ			
3/5	Վարչական գանձումներ, այդ թվում	8400.00	6232.46	74.20
	Տեղական վճարներ	400.00	249.30	62.33
	Շենքերի օրինականացման վճարներ			
	Այլ ոչ հարկային եկամուտներ	8000.00	5983.16	74.79
	4. Հողի օտարումից մուտքեր	1000.00	0.00	0.00
	5,Մնացորդը	3073.184	3073.184	

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
ՈՒՐՑԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 Թ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԸ

N			ԾԱԽՍԵՐԻ ՀՈԴՎԱԾՆԵՐ ԱՆՎԱՆՈՒՄԸ	2017_թ-ի տարեկան բյուջեն	2017- թ-ի հաշվետու ժամանակաշրջան (Ներառյալ ,I կիսամյակ , **9 ամիս** , տարին)			
				պլան	պլան	փաստացի	կատարման %	կատարման %տարեկան պլանի նկատմամբ
Բաժին	խումբ	դաս	**Ընդամենը**	**120367.88**		**88322.49**		**73.38**
01	1	1	Օրենսդիր և գործադիր մարմիններ,պետական կառավարում	61577.15		41046.86		66.66
01	6	1	Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող)	100.00		81.00		81.00
04	2	4	Առոգում	1400.00		1000.50		71.46
04	5	1	ճանապարհային տրանսպորտ	1430.00		1080.84		75.58
05	1	1	Աղբահանում	1950.00		1244.98		63.85
06	4	1	Փողոցների լուսավորում	980.00		979.20		99.92
6	6	1	Բնակարանային շինարարության և կոմունալ	250.00		0.00		0.00
8	1	1	Հանգստի և սպորտի ծառայություններ	990.00		0.00		
08	2	3	Մշակույթի տներ, ակումբներ, կենտրոններ	16900.00		14247.11		84.30
08	5	1	Հանգիստ, մշակույթ և կրոն (այլ դասերին չպատկանող)	1800.00		450.00		25.00
09	1	1	Նախադպրոցական կրթություն	24000.00		20574.00		85.73
09	2	2	Հանրակրթական ուսուցում	3318.00		2898.00		87.34
10	7	1	Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող)	5240.00		4720.00		90.08
11	1	2	ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ	**432.74**				

Համայնքի ղեկավար՝ Ս. Սարգսյան

Գլխավոր հաշվապահ՝ Ա. Մաղբակյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՈՒՐՑԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Ուրցաձոր համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Ուրցաձոր,(0234)86590 (0234) 86-486, urtsadzor90@gmail.com,
urtsadzor.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02 նոյեմբերի 2017թվականի N 36 -Ն

ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական Ինքնակառավարմանմասին>> Հայասատանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետով և << Բյուջետային համակարգի մասին >> Հայասատանի Հանրապետության օրենքի 32-րդ կետով ավագանին որոշեց.

Հաստատել Ուրցաձոր համայնքի բյուջեում կատարվող փոփոխությունները՝ եկամուտների գծով՝ ըստ հավելված 1-ի, ծախսերի գծով՝ ըստ հավելված 2,3-ի:
Բյուջեի եկամուտները ավելացնել 650,0 հազար դրամով սահմանելով 121017,8 հազար դրամ:
Այդ թվում՝
Օտարումից մուտքերը ավելացնել 650,0 հազար դրամով սահմանելով 1650,0 հազար դրամ
Համայնքի բյուջեի ծախսերը ավելացնել 500,0 հազար դրամով սահմանելով 121017,8 հազար դրամ:
Այդ թվում՝
9-1-1 << Նախադպրոցական կրթություն>> ծախսերը ավելացնել 590,0 հազար դրամով սահմանելով 24590,0 հազար դրամ:
Այդ թվում՝
4639 հոդվածը ավելացնել 590,0 դրամով սահմանելով 24590,0 հազար դրամ:
1-1-1 << Օրենսդիր և գործադիր մարմիններ>> ծախսերը կրճատել 2755,0 հազար դրամով սահմանելով 58822,15 հազար դրամ
Այդ թվում
4111 հոդվածը կրճատել 2400,0 հազար դրամով սահմանելով 29100,0 հազար դրամ:
4221 հոդվածը կրճատել 280,0 հազար դրամով սահմանելով 400,0 հազար դրամ:
4215 հոդվածը ավելացնել 10,0 հազար դրամով սահմանելով 116,0 հազար դրամ:
4251 հոդվածը ավելացնել 80,0 հազար դրամով սահմանելով 1830,0 հազար դրամ:
5122 հոդվածը կրճատել 165,0 հազար դրամով սահմանելով 449,847 հազար դրամ:
8-2-3 << Մշակույթի տներ , ակուբներ>> ծախսերը ավելացնել 2400,0 հազար դրամով սահմանելով 19300,0 հազար դրամ:

Այդ թվում՝
4111 հոդվածը ավելացնել 2400,0 հազար դրամով սահմանելով 18400,0 հազար դրամ:
9-2-2 << Հանրակրթական ուս.>> ծախսերը կրճատել 100,0 հազար դրամ սահմանելով 2898,0 հազար դրամ:
Այդ թվում՝
5134 հոդվածը կրճատել 100,0 հազար դրամ սահմանելով 300,0 հազար դրամ:
4-5-5 << Խողովակաշար տրանսպորտ>> նախատեսել ծախս 915,0 հազար դրամ:
Այդ թվում՝
5112 հոդվածով նախատեսել ծախս 915,0 հազար դրամ:
11-1-2 << Պահուստային ֆոնդ >> կրճատել 424,0 հազար դրամով սահմանելով 8,7 հազար դրամ:
Այդ թվում՝
4891 հոդվածը կրճատել 424,0 հազար դրամով սահմանելով 8,7 հազար դրամ:

ԿՈՂՄ-6 **ԴԵՄ-0** **ՁԵՌՆՊԱՀ-0**

1.ՌՈՒԶԱՆՆԱ ՍԱՐԳՍՅԱՆ
2.ՄԱՐՈ ԱՌԱՔԵԼՅԱՆ
3.ՄՀԵՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
4. ԱՐՍԵՆ ՄԻՐԶՈՅԱՆ
5.ԱՐՏՅՈՄ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ
6.ՆՈՐԻԿ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՌԱՖԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՈՒՐՑԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Ուրցաձոր համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Ուրցաձոր,(0234)86590 (0234) 86-486, urtsadzor90@gmail.com,
urtsadzor.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02 Նոյեմբեր 2017 թվականի N 37 - Ն

ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՎՃԱՐ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ, ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՎՃԱՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԱՅԴ ՎՃԱՐԻ ԳԱՆՁՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Աղբահանության և սանիտարական մաքրման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի պահանջով ավագանին որոշեց.

Հաստատել աղբահանության վճար վճարողների հաշվառման,աղբահանության վճարի հաշվարկման, ինչպես նաև այդ վճարի գանձման կարգը՝ համաձայն հավելվածի:

ԿՈՂՄ -6 ԴԵՄ-0 ՁԵՌՆՊԱՀ-0

1.ՌՈՒԶԱՆՆԱ ՍԱՐԳՍՅԱՆ
2.ՄԱՐՈ ԱՌԱՔԵԼՅԱՆ
3. ՄՀԵՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
4.ԱՐՍԵՆ ՄԻՐԶՈՅԱՆ
5.ԱՐՏՅՈՄ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ
6.ՆՈՐԻԿ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌԱՖԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

Հավելված
Ուրցաձոր համայնքի ավագանու
2017 թվականի նոյեմբերի 02-ի
N 37-Ն որոշման

ԿԱՐԳ
ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՎՃԱՐ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ, ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՎՃԱՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԱՅԴ ՎՃԱՐԻ ԳԱՆՁՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով (այսուհետ՝ կարգ) կարգավորվում են Ուրցաձոր համայնքում աղբահանության վճար վճարողների հաշվառման, աղբահանության վճարի հաշվարկման, ինչպես նաև այդ վճարի գանձման հետ կապված հարաբերությունները:

2. Աղբահանության վճարի հաշվարկման, ինչպես նաև այդ վճարի գանձման համար հիմք է հանդիսանում «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածին համապատասխան՝ աղբահանության վճարի դրույքաչափերը սահմանելու մասին Ուրցաձոր համայնքի ավագանու որոշումը:

3. Սույն կարգով չեն կարգավորվում «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածով և «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի «ե» կետով սահմանված շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման թույլտվություններ տալու հետ կապված հարաբերությունները:

II. Աղբահանության վճար վճարողների հաշվառումը

4. Աղբահանության վճար վճարողներ են հանդիսանում «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածով նախատեսված անձինք:

5. Աղբահանության վճարողների հաշվառումն իրականացվում է վճարողների գրանցման մատյանում գրանցելու միջոցով: Վճարողների գրանցամատյանը պետք է վարվի նաև համապատասխան համակարգչային ծրագրով:

6. Աղբահանության վճարողների հաշվառումն իրականացնում են Ուրցաձորի համայնքապետարանի աշխատակազմի համապատասխան աշխատակիցները:

III. Աղբահանության վճարի հաշվարկումը

7. Աղբահանության վճարի հաշվարկը կատարվում է ելնելով շենքի կամ շինության գործառնական նշանակությունից, ընդ որում՝

1) բնակելի նշանակության շենքերի կամ շինությունների համար՝ փաստացի բնակվող անձերի քանակով,

2) այլ շենքերի կամ շինությունների համար՝ ըստ արտադրվող աղբի ծավալի կամ զանգվածի՝ Ուրցաձոր համայնքի ավագանու կողմից սահմանված դրույքաչափերի սահմաններում:

8. Սույն կարգի 7-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված աղբի ծավալը կամ զանգվածը որոշելու (պարզելու) անհնարինության դեպքում, այդ թվում՝ տեխնիկական, աղբահանության վճարի հաշվարկը կատարվում է հետևյալ ամսական դրույքաչափերով՝

1) առևտրի (այդ թվում՝ շուկաների), հանրային սննդի և բնակչության սպասարկման այլ ծառայություններ իրականացվող շինությունների մասով՝ 1 քմ - 10 դրամ,

2) հյուրանոցների և հյուրանոցային ծառայություններ իրականացնող այլ հասարակական շինությունների մասով՝ 1 քմ - 10 դրամ,

3) արտադրական, արդյունաբերական և գրասենյակային նշանակության շինությունների մասով՝ 1 քմ - 5 դրամ,

4) կրթական, մշակութային, առողջապահական, սպորտային, գիտահետազոտական և նմանատիպ այլ հասարակական շինությունների մասով՝ 1 քմ - 1 դրամ,

5) շինություններում, որտեղ իրականացվում է մեկից ավելի բազմաբնույթ տնտեսական գործունեություն, աղբահանության վճարն ամբողջությամբ հաշվարկվում է առավել բարձր դրույքաչափով: Աղբահանության վճար վճարողի պահանջով (դիմումով) կարող է կատարվել վերահաշվարկ՝ ըստ շինության փաստացի նպատակային օգտագործման (չափերի, քմ) տեղեկությունների տրամադրման ամսվան հաջորդող ամսվա 1-ից: Տվյալ դեպքում աղբահանության վճարը հաշվարկվում է ըստ փաստացի նպատակային նշանակության օգտագործման չափերի:

IV. Աղբահանության վճարի հաշվարկումը և գանձումը

9. Աղբահանության վճարի հաշվարկումը և գանձումը իրականացնում են Ուրցաձորի համայնքապետարանի աշխատակազմի համապատասխան աշխատակիցները:

10. Գանձողը ստանում է Ուրցաձորի համայնքապետարանի կողմից տրամադրված՝ աղբահանության վճարի կանխիկ գանձման համար նախատեսված անդորրագրերը, որի համար Ուրցաձոր համայնքի ղեկավարի և գանձողի միջև կնքվում է անդորրագրերի հանձնման և ընդունման արձանագրություն:

11. Համակարգողն իրականացնում է գանձողի կողմից գանձված և հայտի դեպքում՝ անդորրագրերի նոր խմբաքանակների տրամադրման աշխատանքները:

12. Գանձողը ստանալով անդորրագրերը, իրականացնում է անդորրագրերի ընթացիկ հաշվառման, համադրման, անդորրագրերի մնացորդների, ինչպես նաև դրանց պահպանման և ընթացիկ հաշվառման այլ աշխատանքներ:

13. Գանձողը պարտավոր է տվյալ օրվա գանձված գումարը մինչև հաջորդ աշխատանքային օրվա ժամը 16.00-ը բանկային կամ փոստային համակարգի միջոցով գումարը փոխանցել համապատասխան հաշվին, իսկ անդորրագրերը՝ մինչև նույն աշխատանքային օրվա ավարտը, մուտքագրել տվյալների հաշվառման շտեմարան:

Գանձված անդորրագրերի երկրորդ օրինակը՝ համապատասխան ամփոփագրով, գանձողը պարտավոր է հանձնել աշխատակազմին՝ մինչև գանձված գումարի փոխանցման օրվան հաջորդող աշխատանքային օրվա ժամը 15.00-ն:

14. Աղբահանության վճարի հաշվառման և գանձման լիազորություններով օժտված աշխատակիցը համայնքի ղեկավարին է ներկայացնում ամսական տեղեկատվություն՝ հաշվետու ժամանակաշրջանում իր կողմից աղբահանության վճարի հաշվարկման, ինչպես նաև այդ վճարի գանձման գործառույթների իրականացման արդյունքների վերաբերյալ:

V. Աղբահանության վճարի հաշվարկման և վճարման ժամկետները

15. Աղբահանության վճարի հաշվարկման հաշվետու ժամանակահատված է համարվում օրացուցային ամիսը, իսկ վճարման ժամկետը յուրաքանչյուր ամսվա համար՝ տվյալ ամսվան հաջորդող ամսվա 15-ը ներառյալ:

16. Աղբահանության վճարի վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում տվյալ ամսվան հաջորդող ամսվա 1-ից ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար աղբահանության վճար վճարողը վճարում է տույժ՝ ժամանակին չմուծված աղբահանության վճարի գումարի 0.15 տոկոսի չափով, դրանց վճարման ժամկետից անցած ամբողջ ժամանակաշրջանի համար, բայց ոչ ավելի, քան 180 օրվա համար:

VI. Այլ դրույթներ

17. Աղբահանության վճար վճարողների գրանցման մատյանի, աղբահանության վճարի կանխիկ վճարումների ընդունման ամփոփագրի, աղբահանության վճարի գանձման գործառույթների իրականացման վերաբերյալ հաշվետվության, ինչպես նաև սույն կարգի պահանջների նկատմամբ հսկողություն իրականացնելու համար անհրաժեշտ այլ փաստաթղթերի ձևերը հաստատվում են Ուրցաձոր համայնքի ղեկավարի կողմից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՈՒՐՑԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Ուրցաձոր համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Ուրցաձոր,(0234)86590 (0234) 86-486, urtsadzor90@gmail.com,
urtsadzor.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2017 թվականի N 38

ՈՒՐՑԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՀՈՂԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՍԽԵՄԱՅՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂ,ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 1.0 ՀԱ /ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ՝0395-0001/ ԱՐՈՏԸ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԵՐԻ ԿԱՏԵԳՈՐԻԱ՝ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԵՐԻ ՓՈԽԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով<< Ղեկավարվելով «Տեղական Ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 31-րդ կետով, հիմք ընդունելով ՀՀ Արարատի մարզպետի 2017 թվականի հոկտեմբերի 23-ի թիվ 1/13/6583-17 գրությունը՝ հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի N 118 դրական եզրակացության մասին ավագանին որոշեց

Հաստատել Ուրցաձոր համայնքի վարչական տարածքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում պետական սեփականություն հանդիսացող գյուղ,նշանակության 1.0 հա /կադաստրային ծածկագիր՝0395-0001/ արոտավայրի փոխադրումը բնակավայրերի նպատակային նշանակության հողերի կատեգորիայի՝ հասարակական կառուցապատման գործառնական նշանակության / էկոտուրիզմի մասնակիցների հանգստի և ժամանցի կազմակերպման համար/:

ԿՈՂՄ -6	ԴԵՄ-0	ՁԵՌՆՊԱՀ-0
1.ՌՈՒԶԱՆՆԱ ՍԱՐԳՍՅԱՆ		
2.ՄԱՐՈ ԱՌԱՔԵԼՅԱՆ		
3. ՄՀԵՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ		
4.ԱՐՍԵՆ ՄԻՐԶՈՅԱՆ		
5.ԱՐՏՅՈՄ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ		
6.ՆՈՐԻԿ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ		

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌԱՖԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՈՒՐՑԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Ուրցաձոր համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Ուրցաձոր,(0234)86590 (0234) 86-486, urtsadzor90@gmail.com,
urtsadzor.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2017 թվականի N 39

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 10 ՔՄ ՀՈՂԱՄԱՍԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական Ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21 -րդ կետով, և հիմք ընդունելով << ՍահակյանՇին>> Փակ բաժնետիրական ընկերության 01.11.2017 թվականի թիվ 163 գրությունը Ուրցաձոր համայնքի ավագանին որոշեց.

1. Տալ համաձայնություն համայնքային սեփականություն հանդիսացող հողերից 10 ՔՄ հողամասը ջրի մղման կայան կառուցելու նպատակով, վարձակալությամբ տրամադրել << ՍահակյանՇին>> Փակ բաժնետիրական ընկերությանը: Վարձակալության ժամկետը սահմանել 25 տարի: Տարեկան վարձավճարը սահմանել տարեկան՝ 1000/ մեկ հազար / ՀՀ դրամ:

ԿՈՂՄ -6 ԴԵՄ-0 ՁԵՌՆՊԱՀ-0

1.ՌՈՒԶԱՆՆԱ ՍԱՐԳՍՅԱՆ
2.ՄԱՐՈ ԱՌԱՔԵԼՅԱՆ
3. ՄՀԵՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
4.ԱՐՍԵՆ ՄԻՐԶՈՅԱՆ
5.ԱՐՏՅՈՄ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ
6.ՆՈՐԻԿ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌԱՖԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՈՒՐՑԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Ուրցաձոր համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Ուրցաձոր,(0234)86590 (0234) 86-486, urtsadzor90@gmail.com,
urtsadzor.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2017 թվականի N 40

ՈՒՐՑԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 30 ՀԱ ՎԱՐԵԼԱՀՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական Ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21 -րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի թիվ 16 որոշումը, Ուրցաձոր համայնքի ավագանին որոշեց.

1. Տալ համաձայնություն՝ Ուրցաձոր համայնքի վարչական սահմաններում ընդգրկված պետական սեփականություն հանդիսացող 30 հա վարելահող հողամասը երկարաժամկետ օգտագործման նպատակով վարձակալությամբ տրամադրելուն:
Տարեկան վարձավճարը սահմանել՝ հողի հարկից ոչ պակաս:
2. Առաջարկել համայնքի ղեկավարին՝ գրավոր դիմելու Արարատի մարզպետին՝ վերոնշյալ հարցին օրենքով սահմանված կարգով ընթացք տալու համար:

ԿՈՂՄ -6 ԴԵՄ-0 ՁԵՌՆՊԱՀ-0

1.ՌՈՒԶԱՆՆԱ ՍԱՐԳՍՅԱՆ
2.ՄԱՐՈ ԱՌԱՔԵԼՅԱՆ
3. ՄՀԵՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
4.ԱՐՍԵՆ ՄԻՐԶՈՅԱՆ
5.ԱՐՏՅՈՄ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ
6.ՆՈՐԻԿ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌԱՖԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՈՒՐՑԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Ուրցաձոր համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Ուրցաձոր,(0234)86590 (0234) 86-486, urtsadzor90@gmail.com,
urtsadzor.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2017 թվականի N 41

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՆԱԽԱՁԵՌՆՈ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ համայնքի զարգացման համար Ուրցաձոր համայնքն ունի կարիքներ՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Համաձայնություն տալ Ուրցաձոր համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերին Սոցիալական Ներդրումների և Տարածքային Զարգացման Ծրագրին մասնակցելու համար:
2. Ստեղծել նախաձեռնող խումբ, Հայաստանի Տարածքային Զարգացման Հիմնադրամին՝ Ուրցաձ համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի Սոցիալական Ներդրումների և Տարածքային Զարգացման ծրագրին մասնակցության հայտեր ներկայացնելու համար, հետևյալ կազմով.

Նախաձեռնող խմբի նախագահ՝ Ռաֆիկ Անդրեասյան /համայնքի ղեկավար/
Նախաձեռնող խմբի անդամներ՝
Բագրատ Խաչատրյան /համայնքի ղեկավարի տեղակալ/
Արևհատ Ասատրյան /համայնքի ղեկավարի օգնական/
Գոհար Մարգարյան /համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար
Գյուլիզար Նահապետյան /համայնքային կենտրոնի համակարգող/
Աշոտ Մելքոնյան /համայնքապետարանի գլխավոր մասնագետ/
Արարատ Ավետիսյան /Շաղափ բնակավայրի վարչական ներկայացուցիչ/
Հովհաննես Դավթյան /Լանջանիստ բնակավայրի վարչական ներկայացուցիչ/
Գոռ Հովհաննիսյան /ավագանու անդամ/
Արտյոմ Կիրակոսյան /ավագանու անդամ/

3. ՀանձնարարելՆԽ-ին՝
1/ Նախապատրաստել Ծրագրի նախնական առաջարկ,
2/Հայտերի նախնական ընտրությունը կատարել ՀՏԶՀ-ի կողմից առաջարկված չափանիշներին

համաձայն,

3/ Ծրագրի ընտրության և նախապատրաստման ընթացքում մասնակից համայնքների բնակչությանը տրամադրել մանրամասն տեղեկատվություն՝ ծրագրի և նրա նախապատրաստման ընթացքի մասին,

4/ Ձեռնարկել միջոցներ՝ ծրագրի նախապատրաստմանը բնակչութանը ներգրավելուհամար,

5/ Այնպես անել, որ բաղադրիչ ենթածրագրերը՝

ա. ուղղված լինեն մասնակից համայնքների ընդհանուր սոցիալական և տնտեսական խնդիրների լուծմանը,

բ. իրար լրացնեն և ուժեղացնեն

4. Լիազորել նախաձեռնող խմբի անդամներին՝ Ուրցաձոր համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի սոցիալական ներդրումների և տարածքային զարգացման ծրագրի առաջարկները ՀՏՋՀ-ին ներկայացնելու համար:

5. Ուժը կորցրած ճանաչել համայնքի ավագանու 2016 թվականի սեպտեմբերի 30-ի թիվ 10 որոշումը:

ԿՈՂՄ -6 ԴԵՄ-0 ՁԵՌՆՊԱՀ-0

1.ՌՈՒԶԱՆՆԱ ՍԱՐԳՍՅԱՆ

2.ՄԱՐՈ ԱՌԱՔԵԼՅԱՆ

3. ՄՀԵՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

4.ԱՐՍԵՆ ՄԻՐԶՈՅԱՆ

5.ԱՐՏՅՈՄ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

6.ՆՈՐԻԿ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌԱՖԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ